ՍՈՒՐԲ ՑԱՐՈՒԹԻՒՆ

Դործ՝ ԼԱՈՒՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ, 1978, Երևան



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1978 թ. մարտի 26)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:
«Յարեաւ Քրիստոս ի մեռելոց»:

Սիրելի հավատացյալներ,

Տեր Աստված հարցն մերոց, գոհություն Քեզ որ ամեն գարնան լուսաբացին բոլորիս պարգևում ես ուրախությունը հարության, սուրբ հիշատակովը Միածին Որդվույդ մեծ հաղթության:

Այսօր, այս լույս առավոտյան, վերստին պահն է այդ ուրախության, պահը հրաշք հարության Հիսուսի Քրիստոսի, պահը Նրա հաղթության ընդդեմ մեղքի ու ընդդեմ մահու:

Սուրբ Ավետարանիչները մեր, և պատմական հնագույն աղբյուրներ վկայում են ճշմարտությունը այդ հրաշալի դեպքի, որի վրա է խարսխված հավատքն ու հույսը փրկության՝ ողջ քրիստոնյա աշխարհի, երեկ, այսօր ու հավիտյան: Ու անցնող երկու հազար տարիների պատմությունը և քաղաքակրթությունը ևս, պայծառ վկայությունն են հանդիսանում միևնույն ճշմարտության: Այո՛, դարերի հոլովույթով, մարդկային ոգեկան ուժերի զմայլելի թռիչքներով ու իրագործումներով, ավելի ու ավելի ճշմարտվեց աշխարհասասան դեպքը Նազովրեցի Հիսուսի հարության: Մեծ հրաշքը դարձավ տևապես կենդանի ապրում ու փրկագործ տեսիլք մահախուճապ սերունդների համար, դարձավ գերագույն ուրախությանց աղբյուր, դարձավ մարդկային հոգին արգասավորող ու նրան ստեղծարար ներշնչանքներ պարգևող մշտանորոգ ուժականություն:

Ուրեմն, սիրելի հավատացյալներ, Քրիստոսի հարության հիշատակը, լոկ պատմական մի դեպքի տարեդարձը կամ տոնակատարությունը չէ, այլ միշտ նորոգվող հոգեկան մի հրաշալի ապրում, որ համակում է մարդկանց

ողջ էությունը, ամեն տարի միշտ նույն ուժգնությամբ, միշտ նույն թարմությամբ, միշտ նույն թերմությամբ: Ամեն տարի, կարծեք նոր է որ հարություն է առնում Հիսուս Իր գերեզմանից: Կարծեք մեզանից ամեն մեկի հոգու գերեզմանից է հառնում Նա: Հիսուսի հարությունը այսպիսով դառնում է ամեն մեկիս հոգու զարթոնքը, ամեն մեկիս հոգու հաղթությունը մեր մարմնի կաշկանդումների դեմ, մեր մեղքերի դեմ, մահվան ուրվականի դեմ: Հիսուսի հարությունը ճանապարհն է մեր հոգիների փրկության: Հիսուսի հարությունը ստուգությունն է՝ հավիտենական կյանքի մեր անմար հույսի:

«Զի որպէս թագաւորեցին մեղքն ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ ի կեանսն յաւիտենից ի ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ» (Հռոմ. Ե 21): Այսինքն՝ «Ինչպես որ մեղքը թագավորեց մահվան մեջ, նույնպես և շնորհը պիտի թագավորի արդարությամբ հավիտենական կյանքի մեջ, մեր Տեր Հիսուսի Քրիստոսի միջոցավ»:

Արդ, որովհետև ճշմարտապես հարյավ Հիսուս ի մեռելոց, ուրեմն և ճշմարտապես փրկության կոչված են բոլոր հոգիները, արդարանալով իրենց հավատքով ու իրենց բարի գործերով:

Այս լույս Զատկի առավոտյան, հարության ուրախության ճառագայթումով, թող մեր հոգիների մեջ հրաշափառորեն հայտնվի Ինքը Հիսուս, որպեսզի սրբվենք մեր մարմնի ու հոգու տկարություններից և դառնանք վերածնված մարդիկ, դառնանք լուսո որդիներ, երբեք չմեռնելու հույսը մեր սրտերում ծրարած:

Հիսուսի հրաշափառ հարությունը՝ լույսն ու հաղթությունն է մեր կյանքի, սկիզբը և պսակը մեր բոլոր ուրախությունների:

Այդ հավատքով, այդ ստուգությամբ դաստիարակում է ու առաջնորդում մեզ՝ բոլոր հայերիս, Հայաստանյայց եկեղեցին, մեր առաքելական Մայր եկեղեցին, բոլոր հայերի, բոլոր ժամանակների մեր հարազատ եկեղեցին:

Փա՜ռք հրաշափառ Հարության Տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի:

Հարգա՜նք ու հավատարմություն Քեզ, եկեղեցի հայկական, ծննդավայրն ու փրկության ճանապարհը բոլոր հայ հոգիների:

Սիրելի հավատացյալներ, ինչպես գիտեք, Մենք նոր ենք վերադարձել արտասահման կատարած Մեր ուղևորությունից, երբ այցելեցինք Պաղեստի և Փարիզի հայոց եկեղեցիները, հանդիպեցինք այնտեղ մեր հավատացյալներին, ձեր հարազատ քույրերին ու եղբայրներին, բաշխելով նրանց բոլորին առավել հավատք, առավել հույս և սուրբ Էջմիածնից կենարար օրհնություն:

Այս առավոտ Մենք մի անգամ ևս համոզվեցինք թե ի՞նչ բախտորոշ դեր է վերապահված մեր Մայր եկեղեցուն, ի խնդիր մեր պանդուխտ ժողովրդի հոգիների լուսավորության, կրոնական, կրթական, մշակութային ու հայրենասիրական իմաստով: Մի անգամ ևս համոզվեցինք թե ինչպիսի՞ բախտորոշ ու պատվարեր առաքելություն ունեն ամեն տեղ, մեր եկեղեցու սպասավորները, մեր հոգևորական եղբայրները սփյուռքի տարածքի վրա: Մեր մաղթանքն է որ Տերը առավել պայծառացնի նրանց առաքելության գիտակցությունը, առավել աճեցնի նրանց աշխատանքի եռանդը, առավել զորացնի նրանց հավատքը իրենց նվիրական գործի նկատմամբ: Մեր մաղթանքն ու հորդորն է որ մեր եկեղեցու հոգևոր սպասավորները իրենց

ծիսական և վարչական պարտականության զուգահեռ, ոգեշնչումով ու անձնուրացությամբ նվիրվեն հայ նոր սերունդների կրոնական, կրթական ու մշակութային հայեցի դաստիարակության գործին: Միշտ այժմեական է մեծն Աբովյանի կտակը՝ նախնյաց «հավատն ու լեզուն» սրբությամբ պահպանելու մասին: Գիտենք թե արտերկրի պայմաններում դրանք երբեմն իրավամբ անիրագործելի ծրագրեր ու առաջադրանքներ են թվում: Սակայն, մենք եթե իրավ քրիստոնյաներ ենք ու հավատում ենք հոգեկան ուժերի ու անդուլ աշխատանքի հրաշագործության, ապա լավատեսությամբ պետք է դիմագրավենք բոլոր դժվարությունները և իրագործենք, կյանքի կոչենք այն ինչ անհաղթահարելի է թվում առաջին ակնարկից:

Սուրբ Զատկի խորհուրդներով լի, հրաշքի այս պահին, երկյուղածությամբ մոտենանք Հիսուսի լույս գերեզմանից բաշխվող շնորհներին, լցնելու համար մեր արտերն ու հոգիները՝ հավատքով դեպի մեր առաքելությունը, վառ հույսով դեպի հայոց ապագան, սիրով ու նվիրումի ոգիով դեպի մեր Մայր եկեղեցին, դեպի մեր հարազատ ժողովուրդը և դեպի մեր վերածնված մայր հայրենիքը:

Սիրեցյալ հոգևոր զավակներ Մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, թող հավետ օրհնյալ լինի հրաշալի հարությունը Քրիստոսի:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեան». ամեն: